

Արեւին պերճ լոյսին համար՝ որ կը փաղփի քրքմանըկար
 Մեջն հոտեւան ծայրիներու ծայրածաւալ ծաղիկներուն՝
 Ուր դիցանուէր բաժակներու քամեց ամբոսն անյագ մեղուն:
 Ծառոց ետին ճաճանչաւուխտ պաստառ մըն է արեւն ոսկի,
 Ուր ծաղկածին ուղեշներու ճամուկ հիւսքը կը սողոսկի:
 Ու զեփիւռն ալ, կայտռուն համբոյր, մանկութիւն մ'է
 վերադարձած.

Ու ջրցայտքն ալ՝ փսփսուքն է բարեկամին՝ մըտերմասաց:
 Սիւքն աղջընակ՝ որ հիւսիսէն կը քնքշանայ հոգւոյս վըրան.
 Ու ջրցայտքն՝ որ լաջակ կ'ըլլայ նարկիսներու գլխուն դեղձան,
 Կամ արտասուք՝ աչքերուն մեջ շահպրակներու հոյին ցիրցան
 Ու քաղցրութեամբ կ'օծէ մենիկ ծաղիկներուն այդ լըռարան:
 Ու թերթիկներ՝ շահարիկի շընորիք՝ կ'իյնան ափերուս մեջ,
 Բաց ափերուս՝ որ կ'երկարին լոյսի խուրձին փողփողենեջ:
 Ահա՛ կ'անցնի, մըշուշուած բիլ կագով տեսիլ մ'ալ զերթ ալիք.
 Չարմանուհի մ'է վարսագեղ, կաթ ու վարդի՛ հըրաշալիք...
 Յաւերժահարս կաթ ու վարդէ, ծաղիկ, ճաճանչ, ջուր ու զեփիւռ...
 Շա՛տ էր լեցուն հոգւոյս, ո՛վ Տէր, բազմագեղումն այս
 շրջասփիւռ...

32. ԼՈՒՍՆԱԿ ԶՈՒՐԻԿԻՍ

Ա

Երեկ գիշեր մոռցեր էիր,
 Լուսնա՛կ, գիտե՞ս,
 Երեկ գիշեր մոռցե՛ր էիր պատուհանիկս իմ համեստ.
 Պատուհանիկս իմ անտես՝
 Ուր մութ մը գորշ վիժակի պէս էր կախուէր:
 Յոգ չէ՛ր, այդ մութն ըրի խորան հսկումի՛
 Ուր պաշտանքի ո՛չ մէկ ծաղիկ կը թոռմի,
 Ուր մութի տակ լոկ նինջ մը կայ լուսանուէր:
 Երեկ գիշեր անցար քովես,
 Անցար, գո՛ւցէ անգիտակ,
 Անցար՝ եւ ես՝
 Քու հեռաւոր պերճանքներուդ շլացքին տակ՝
 Չուրի ցայտքի մը պէս զըւարթ՝ հծծեցի:
 Օ՛հ, պարտեզը չէ՛ մոռցեր,
 Եւ արիշն ու սարբիւնան